Ազգ
Azg
26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2008 ՈՒՐԲԱԹ 176 (4070)

## Բաքուն ցանկանում է, որ Թուրքիան դառնա Մինսկի խմբի համանախագահ

Ադրբեջանի նախագահի աշխատակազմի միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ Նովրուզ Մամեդովը «Թրենդ»-ին հայտարարել է, թե պաշտոնական Բաքուն ցանկանում է, որ Թուրքիան՝ որպես միջնորդ, ավելի մոտիկից մասնակցի ղարաբաղյան հակամարտության լուծմանը: «Ադրբեջանը կցանկանար, որ Թուրքիան դառնա ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահ», ասել է նա: «Թուրքիան բարեկամ, եղբայրական երկիր, Ադրբեջանի ռազմավարական գործընկերն է ու ներկայացված է Մինսկի խմբում: Բայց Մինսկի խմբի համանախագահությունը ձեւավորվում է փոխհամաձայնության սկզբունքով: Ըստ իս, այն բանի հավանականությունը, որ Հայաստանը կհամաձայնի Թուրքիայի համանախագահությանը, հավասար է զրոյի», հավելել է Ադրբեջանի նախագահի վարչակազմի ներկայացուցիչը, հաղորդում է «Արմենպրեսը»:

# Հայաստանին սպառնացող հրասայլ գլխավոր հարցերը Սերժ Սարգսյանի ՄԱԿ-ի ելույթում

Ելույթ ունենալով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 63-րդ նստաշրջանում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը անդրադարձավ վերջին ամիսներին Կովկասում տեղի ունեցած արյունալի իրադարձություններին, նշելով, որ այդ ամենը հնարավոր դարձավ երկրների ղեկավարների սխալ խաղաքականության հետեւանքով: Նախագահը իր ելույթում մանրամասն կերպով անդրադարձավ նաեւ հայ-թուրքական ֆուտբոլային դիվանագիտությանը, նշելով, որ Թուրքիայի նախագահ Գյուլը ընդունելով իր հրավերը համարձակ քայլ կատարեց: Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթի մի հատվածը նվիրված էր ղարաբաղյան հիմնախնդրին: Նա ներկաների ուշադրությունը հրավիրեց հարեւան Ադրբեջանի աննախադեպ սպառազինմանը եւ համեմատություններ անցկացնելով վերջին պատերազմի հետ, նշեց դրա ողջ վտանգավորությունը: Միաժամանակ շեշտելով, որ պաշտոնական Բաքվի առաջ քաշած, այսպես կոչված, օկուպացիայի մասին բանաձեւերը եւ դրանց կողմ քվեարկողները միայն սրում են իրավիճակը առանց այն էլ վտանգավոր եւ պայթյունավտանգ տարածաշրջանում: Նախագահը շեշտեց, որ զինադադարի պայմաններում, նույն այդ զինադադարի որեւէ խախտում եւ թեկուզ մեկ կրակոց պետք է գնահատվի որպես ագրեսիա: Անդրադառնալով ազգերի ինքնորոշման միջազգային իրավունքին, Հայաստանի նախագահը հայտարարեց, որ այն մինչեւ այսօր դարձել է փորձաքար շատերի համար, եւ երբ փոքր ժողովուրդները փորձել են դրանից օգտվել, ապա ենթարկվել են հետապնդումների ու ցեղասպանության: Իր ելույթի վերջում նախագահը անդրադարձավ Մարդու իրավունքների եւ Ցեղասպանության կոնվենցիաների ընդունման 60 ամյակին, նշելով, որ որպես Ցեղասպանություն տեսած ժողովուրդ կարեւորում է դրանց ընդունումը, որպես հետագայում հնարավոր ցեղասպանությունների կանխարգելման միջոցի, միաժամանակ շեշտելով, որ թեեւ մարդու իրավունքների պաշտպանության եւ ժողովրդավարության հարցում Հայաստանում կան թերություններ, եւ երիտասարդ ժողովրդավարության մեր երկիրը դեռ շատ բաներ ունի սովորելու, սակայն Հայաստանը փորձում է ուրիշների սխալները չկրկնել:

Ելույթի ամբողջ տեքստը կարող եք կարդալ «**Ազգ**»-ի կայքէջի լուրերի բաժնում:



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Նյու Յորքի իր կեցավայրում ընդունել է ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսին: Քննարկվել են հայ-ամերիկյան հարաբերություններին եւ տարածաշրջանային զարգացումներին առնչվող հարցեր:

Ամ

## 2009-ի բյուջեն կկազմի ավելի քան 3 մլրդ դոլար

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**2009-ի պետական բյուջեի նախագիծը երեկ հաստատեց կառավարությունը եւ ուղարկեց Ազգային ժողովի քննարկմանը: Երկրի գլխավոր ֆինանսական փաստաթղթի մասին կառավարության նիստից հետո լրագրողներին մանրամասներ հաղորդեցին ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանը եւ փոխնախարար Պավել Սաֆարյանը:**

**Ինչպես նշեց Տիգրան Դավթյանը, բյուջեի նախագծի հիմքում դրված են մի քանի առանցքային փաստաթղթեր՝ կառավարության գործունեության 2008-2012 թվականների ծրագիրը, աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (վերանվանված կայուն զարգացման ծրագիր), ինչպես նաեւ ֆինանսների նախարարության եւ Կենտրոնական բանկի մասնագետների մակրոտնտեսական կանխատեսումները, միջազգային ֆինանսական կառույցների փորձագետների եզրակացությունները:**

**Այսպիսով, ըստ բյուջեի նախագծի, եկող տարի կանխատեսվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 9,2 տոկոս աճ: Միաժամանակ, բյուջեով նպատակադրվել է ունենալ ցածր գնաճ՝ 4 տոկոս՝ գումարած կամ հանած 1,5 տոկոս: Նման ցածր գնաճի համար, ֆինանսների նախարարի հավաստմամբ, ստեղծվել են բոլոր նախադրյալները: Մասնավորապես, եկող տարի ծրագրվում է 1 տոկոսից էլ ցածր բյուջեի դեֆիցիտ (պակասուրդ), որը հնարավորություն է տալիս զսպելու գնաճային ճնշումները:**

**ՀՆԱ-հարկեր հարաբերակցությունն ավելանալու է 0,4 տոկոսային կետով եւ կազմելու է 17,4 տոկոս: Այս տարի այդ ցուցանիշը կկազմի 17 տոկոս: Համախմբված բյուջեն, որը ներառում է նաեւ համայնքային բյուջեները, եկամտային մասով կկազմի 927,1 մլրդ դրամ, ծախսային մասով՝ 967,1 մլրդ դրամ:**

Տես էջ 3

## Մարի Յովանովիչ. «Հայաստանի մեկուսացվածությունը վերացնելը դարձել է անհրաժեշտություն»



**Երեկ Մ. Նահանգների դեսպանատանը բարեգալստյան ընդունելություն էր ի պատիվ դեսպան Մարի Յովանովիչի: Ներկա էին հայաստանյան պետական տարբեր գերատեսչությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, օտարերկրյա դեսպաններ, կուսակցությունների պետեր, կրթական եւ հասարակական կազմակերպությունների ու լրատվամիջոցների ղեկավարներ: Նորանշանակ դեսպան տիկին Մարի Յովանովիչը, Մ. Նահանգներ-Հայաստան բարեկամության կենաց բաժակ բարձրացնելուց առաջ արտասանած ողջույնի հակիրճ խոսքում, որն, ի դեպ, սկսեց հայերեն լեզվով, հիշեցրեց երկու երկրների ու ժողովուրդների միջեւ պատմական-բարեկամական խոր կապերը եւ արագ անցում կատարելով դեպի մեր օրերը, շեշտեց, որ Մ. Նահանգները շարունակում է ուղիներ փնտրել, հատկապես վերջին երկու ամիսներին պատահած իրադարձություններից հետո, Հայաստանը դուրս բերելու իր մեկուսացումից: «Հայաստանի մեկուսացվածությունը վերացնելը, ասաց նա, դարձել է անհրաժեշտություն»: Տիկին Յովանովիչն անդրադարձավ նաեւ նախագահ Գյուլի Հայաստան այցելությանը, որը նոր հույսեր է ներշնչում տարածաշրջանային անվտանգության ու բարօրության համար, միաժամանակ հույս հայտնեց, որ ղարաբաղյան հիմնահարցն իր լուծումը կգտնի: Տիկին դեսպանը խոստացավ ջանք չխնայել Հայաստանի ժողովրդավարության զարգացման եւ առկա խնդիրների կարգավորման ուղղությամբ:**

## Տ. Թորոսյանը հանդիպեց աշխատակազմի հետ

Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսյանը երկրորդ անգամ կներկայացնի իր հրաժարականը: Այդ մասին նա հայտնել է Ազգային ժողովի աշխատակազմի հետ հանդիպման ժամանակ: «Ես երկրորդ հրաժարականը ներկայացնելու եմ եւ այսօր ուզում եմ պարզապես բոլորիդ շնորհակալություն հայտնել համատեղ աշխատանքի համար», Ազգային ժողովի հասարակայնության հետ կապերի վարչության փոխանցմամբ, ասել է Թորոսյանը աշխատակազմի անդամների հետ հանդիպման ժամանակ, միաժամանակ ներողություն խնդրելով, եթե ուշադիր չի եղել ինչ-որ մեկի խնդրի նկատմամբ: «Կան երեւույթներ, կան կառույցներ, որոնց վերաբերյալ դեռեւս կարծրացած, կաղապարված պատկերացումներ կան», նշել է Տիգրան Թորոսյանը: Հրաժարականը Թորոսյանը ներկայացրել էր սեպտեմբերի 19-ի արտահերթ նիստում: Ազգային ժողովի կանոնակարգով նախատեսված ժամկետը լրանալուց անմիջապես հետո հրաժարականը կրկնելու դեպքում ընդունված կհամարվի, որին կհետեւի ԱԺ նոր նախագահի ընտրությունը:

## Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Շարունակում ենք Վիլյամ Սարոյանի եւ Մանուել Թոլեգյանի արվեստի մասին ուշագրավ զրույցների տպագրությունը:

Առաջարկում ենք Վազգեն Գաբրիելյանի գրախոսությունը Վահագն Գրիգորյանի «Ժամանակի գետը» վեպի մասին: Բեյրութահայ գործարար, բազմաթիվ գրքերի մեկենաս Արմեն Հարությունյանի եւ գրականագետ, արվեստաբան Լեւոն Հախվերդյանի նամակագրության վերջերս հրատարակված ժողովածուին է անդրադառնում թատերագետ Վարսիկ Գրիգորյանը:

Լեռ Կամսարի թոռնուհու՝ Վանուհի Թովմասյանի «Ընդամենը մեկ պատասխանը Գրիգոր Աճեմյանի երկու գրախոսականներին»:

Ժամանակը եւ տպագիր գիրքը. հեղինակ-հրատարակիչ-տպագրիչ-գրավաճառ ցանց. վիճակ, մտահոգություն, առաջարկներ՝ Մելանյա Բադալյանի հրապարակումների շարքում:

Մ. Բ.

## «Կովկասի կայունության եւ համագործակցության պլատֆորմը» կարող է այլընտրանք չլինել մյուս կառույցների համար

### *Սակայն դա դարձել է ցեղասպանության եւ Ղարաբաղի հիմնահարցերում սեփական տեսակետներն առաջ մղելու պատեհ առիթ Թուրքիայի համար*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Նախագահ Աբդուլլահ Գյուլի Երեւանյան այցը, միջազգային մամուլի լայն արձագանքը դրան, ԱՄՆ-ում եւ Եվրամիությունում դրա առնչությամբ արված գոհունակության պաշտոնական հայտարարությունները, ինչպես նաեւ վերջիններիս աննվերապահ աջակցությունը վարչապետ Էրդողանի «Կովկասի կայունության եւ համագործակցության պլատֆորմի» նախաձեռնությանը, մեծապես ոգեւորել են Թուրքիայի ղեկավարներին: Թերեւս դա է պատճառը, որ նրանք միջազգային ֆորումներում, աշխարհի առաջնակարգ թերթերի էջերում ոչ մի առիթ բաց չեն թողնում՝ ընդգծելու Հարավային Կովկասի «սառեցված» հակամարտությունների կարգավորման, Հայաստան-Ադրբեջան-Վրաստան հարաբերությունների զարգացման այն դերակատարությունը, ինչն ստանձնել է Թուրքիան հարավօսական պատերազմի ավարտին:

Ինչ խոսք, նախագահ Գյուլի այցը Երեւան պատեհ առիթ է ստեղծել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների զարգացման համար: Սակայն առիթը նպատակին ծառայեցնելու համար անհրաժեշտ է, որ Թուրքիայի ղեկավարները բարի կամք դրսեւորեն Հայաստանի նկատմամբ: Գուցե նրանք ունեն այդ կամքի դրսեւորման պատրաստակամությունը, բայց եւ այնպես, նախապատվությունը տալիս են ԱՄՆ-ի ու ԵՄ-ի աջակցությունը վայելող «Կովկասի կայունության ու համագործակցության պլատֆորմի» նախաձեռնությամբ եւ հարավօսական պատերազմի ավարտին Արեւմուտքի հավանությունը վայելող դերակատարությամբ ստեղծված ավելի պատեհ առիթին եւ ամեն կերպ առաջ են մղում ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ սեփական տեսակետները:

Տես էջ 2

